

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ՊԱՆԴԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ Վ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻ
«ԶՎԱՐԹՆՈՅՈՒՄ»

Ցանկացած ստեղծագործություն երկնելու ժամանակ գրողը ուշադրությունը բևեռում է այս կամ այն խնդրի, զգացմունքի, պրոբլեմի լիակատար բացահայտման վրա: Վ. Խեչումյանի ստեղծագործությունը բացառություն չէ: Լինելով մարդկային զգացմունքների և երազանքների երգիչ՝ նա կարողանում է ընդգծել իր պատկերած ժամանակաշրջանի ամբողջական պատկերը՝ միաժամանակ ուշադրություն դարձնելով և՛ իր հերոսների զգացմունքներին, և՛ նրանց շուրջ ծավալվող պրոբլեմներին, և նրանց ընդհանուր սոցիալական կարգավիճակին: Վ. Խեչումյանի պատմվածքները ավելի շատ խոհ ու մտորում են հիշեցնում, ահա ինչու նրա հերոսների կարգավիճակն ու արտաքին շրջապատի նկարագրությունը երկրորդական պլանով է ներկայացված: Նա ստեղծում է կոլորիտ, ուր մարդկային բարդ հարաբերությունների պարզաբանման կողքին նկարագրում է նաև նրանց ապրելակերպը: Սա օգնում է հերոսին տեսնել ամբողջության մեջ՝ իր բնավորության ուժեղ և թույլ կողմերով: Իր ստեղծագործական կյանքի սկզբից ևեթ հեղինակը հեռանում է իր ժամանակաշրջանից և գնում դեպի հեռավոր միջնադարը, որը ինքնին բարդ դարաշրջան էր թե՛ արտաքին թշնամուն դիմակայելու առումով, թե՛ ներքին սոցիալ-տնտեսական կյանքով, թե՛ փիլիսոփայական, կրոնական գաղափարներով: Միջնադարում ապրող հայ մարդը գտնվում էր անընդմեջ ճնշման տակ, և Վ. Խեչումյանի առջև շատ բարդ խնդիր է դրվում. գեղարվեստորեն արտացոլել միջնադարի հայ մարդուն այնպես, որ նա ամեն կողմից «ընթեռնելի» լինի ընթերցողին: Հենց սա է «Զվարթնոց» ժողովածուի առաքելության հիմնական գծերից մեկը: Սրանով էլ ժողովածուն դառնում է մարդկանց սոցիալական վիճակը բացահայտող և դրանից ծնված բարդ հարաբերությունների պարզաբանման յուրօրինակ մի բանալի:

Վ. Խեչումյանը ապրումների միջոցով է բացահայտում մարդկային կյանքի ծանր կողմերը: Նա դա անում է շատ նրբանկատորեն: Առաջին պլան մղելով իր հերոսների վեհ գաղափարները՝ նա դանդաղ, առանց չտապելու, ընդամենը մեկ-երկու նախադասությամբ նկարագրում է իր հերոսի սոցիալական վիճակը: Այդպես է «Ցայգածաղիկ» և «Աստվածամայրը» պատմվածքներում: «Ցայգածաղիկ» պատմվածքում հեղինակի ուշադրության կենտրոնում գնելի հոգում կատարվող փոխտիտություններն են, նրա մեծ սիրո նկարագրությունը: Հավատալով հոր մատյանում գրված դեղատոմսին՝ նա փորձում է ցայգածաղիկի

կախարդական ուժը և գտնում իր երջանկությունը: Պատմվածքի մեջ չկա սոցիալական ծանր վիճակի կամ բախման նկարագիր, բայց ընթերցողը գիտի, որ Գնելը աղքատ է, քանզի հեղինակը շատ զգույշ ակնարկում է այդ մասին ընդամենը մեկ մախադասությամբ. «Մտածում էր գնալ, մեկին ուղարկել հոր մոտ, խնդրել աղջկա ծեռքը, բայց պակասում էր համարձակությունը: Վախենում էր իրեն շատ աղքատ համարեն, հետո էլ մխիթարվում էր, քանի որ Անանիան իրենից շատ ավելի տնտեսություն չուներ: Բայց դարձյալ ծագում էր կասկածը, և նա ոչինչ չէր փորձում¹»: Գնելի համար սփոփանք է, որ ինքն ու Յրանուշը իրենց սոցիալական վիճակներով հավասար աստիճանների վրա են կանգնած, և այս փոքրիկ ակնարկով Վ. Խեչումյանը պարզապես հուշում է, թե որքան պրոբլեմներ կծագեին նրանց միջև, եթե նրանցից մեկը հարուստ, իսկ մյուսը աղքատ լիներ: Նույնը «Աստվածամայրը» պատմվածքում: Հեղինակը դարձյալ առաջին պլան է մղում իր հերոսի գաղափարական աշխարհի և հոգու հարստության բացահայտումը, մինչդեռ դիտողի կարգով է ցույց տալիս նրա ապրելակերպը: Հովմանը գերադասում է աղքատ, բայց ազատ կյանքը, քան վանքի մռայլ պատերը. «Վանահայրը անտեղի է ուզում, որ ես վանք մտնեմ: Չեմ գնա: Լավ է այսպես՝ այգեպան և ծաղկող: Մի կերպ կապրեմ» (8): Հեղինակը չի միջամտում հերոսին և ընթացք է տալիս նրա խոհերին: Իսկ Հովմանը, իր երջանկությամբ տարված, միաժամանակ ցույց է տալիս, որ ինքը մենակ չէ: Իր նման շատերը կան. «Հովմանն ուրախ մայում էր Արիստակեսին, լցվում բարությանը ու խղճով դեպի այդ կորամեջք ծերունին, ցանկանում էր մի քաղցր խոսք ասել այդ՝ իր նման աղքատ ու դժբախտ մարդուն: Ինքն էլ հարուստ չէր, որ կարողանար օգնել, միայն սերն ու նկարներն էին իր գանձերը, որոնք թանկ էին ամեն ինչից շատ և որից բաժին հանել չէր էլ կարող» (11):

Վ. Խեչումյանի հերոսները արդար մարդիկ են: Նրանք, ճիշտ է, հասարակ գոիչներ, ծաղկողներ են, բայց իրենց հոգում ամփոփում են այնպիսի հույզեր և տարված են այնպիսի գաղափարներով, որ զոհում են ամեն ինչ՝ իրենց ունեցվածքը, իրենց ազատությունը, ֆիզիկական և հոգեկան կարողությունները: Օժտելով իր հերոսներին վեհ գաղափարներով և ընթերցողների առջև, որպես բաց գիրք ներկայացնելով նրանց ներաշխարհը՝ նա այնտեղ չի տեսնում կեղծիք, սուտ, դաժանություն: Նրա կերպարները, ճիշտ է, աղքատ են, բայց հարուստ են հոգով, դարերի իմաստությամբ, մեծերից ժառանգած գիտելիքներով: Հենց այդպիսին է «Հեթում գրիչ» պատմվածքի հերոսը, որը գիտակցում է, որ ժողովրդի ապագան նրա հերոսական անցյալի փառաբանման մեջ է, որ կարևորը Անանիա Շիրակացու փիլիսոփայությունն է, Արիստակես Լաստիվերցու պատմությունը: Եվ հանում նրա, որ այդ մեծ գանձերը հասնեն հետագա սերունդներին, նա պատրաստ է ապրել ամենավատ պայմաններում, որովհետև

1. Վ. Խեչումյան. «Զվարթնոց», Ե. 1945. էջ 1 (այսուհետ էջերը՝ տեքստում):

հանցանք է այդ հարստությունը կորցնելը: Եթե “Աստվածամայրը” և “Ցայգա-
 ծաղիկ” պտմվածքներում Վ. Խեչումյանը ընդամենը մեկ նախադասությամբ էր
 ընդգծում իր հերոսների ծանր վիճակը, ապա “Հեթում գրիչ” պատմվածքում նա
 ընդլայնում է սահմանները: Բացի իր հերոսներից, նա ցույց է տալիս նաև երկրի
 վիճակը: Վ. Խեչումյանը դա անում է բազմաթիվ գեղարվեստական հնարքների
 ու պատկերների միջոցով: Հեթումի աչքերով նա պատկերում է ուխտավորների
 խումբը՝ կանայք, երեխաներ, որոնք լալիս են, ծերունիներ՝ բոլորն էլ հոգնած
 դեմքերով, հնամաշ հագուստներով: “Երանի թե նոր աշխարհագիր գար, փոխեր
 հարկերը: Ստացիր հողից ոչինչ, տուր բոլոր տեսակի տերերին, - գանգատվում
 էր մի ծեր շինական, որ երևի պատմելով հիշում էր Բաշու զորավարի վերջին
 տարին ուղարկած աշխարհագրի մասին՝ չնայած նա չէր օգնել, այլ հաշվի
 առնելով մարդկանց՝ ավելացրել էր հարկերը”(30): Երկրի ներսում մարդիկ
 հյուսված ու տանջված են: Իշխանության գլուխ կանգնած նախարարներն ու
 եկեղեցին տանում են ամեն ինչ և մարդկանց խեղդում իրենց հարկային
 քաղաքականությամբ: Շինականին ոչինչ չի մնում անելու, քան բավարարվել
 իր ստացածի մի չնչին մասով: Սակայն երկրի ներսում սոցիալական ծանր
 վիճակը և մարդկանց մեջ եղող բարդ հարաբերությունները միայն հարկերով
 չէին պայմանավորված: Վ. Խեչումյանը իր հերոս Հեթումի միջոցով բաց է անում
 կյանքի ողջ անարդար կողմը: Մարդիկ ապահովված չեն, նրանց կյանքը,
 նրանց ֆիզիկական գոյությունը կախված են մի խումբ մարդկանց կամքից: Այդ
 մի խումբ մարդիկ են կյանքի տերերը, նրանք են որոշումներ կայացնում և ի
 կատար ածում դրանք՝ ըստ իրենց հայեցողության: Հեթումը ապրում է.
 “հնադարյան վանքի պարսպին կպած խութերից մեկում, աղքատ ու բորբոսնած
 իրերի մեջ, որոնք տրվել էին վանքի կողմից”: Նույնը Նավասարդը, նույնը
 Ազարիան: Նրանք երեքն էլ կատարում են վանահոր պատվերները, ծաղկում են
 եկեղեցական գոքերը՝ դրա փոխարեն ստանալով չնչին վարձ: Եվ ահա
 վանահայրը նոր պատվեր է տալիս: Հեթումի համար սա դժբախտություն է,
 որովհետև ժամկետը կարճ է, վարձը՝ քիչ և, ամենակարևորը, ամիմաստ ու
 տհաճ աշխատանք է: Բայց ահա թե ինչպես է իր տրտունջը արտահայտում
 հերոսը. “Ասում էր վանքի համար է պետք: Չեմ կարծում: Թերևս մի իշխանի կամ
 իշխանուհու համար՝ ի տրիտուր մեծածավալ նվիրաբերության կամ անառա-
 կության” (28): Գեղարվեստական պատկերը այստեղ իրոք հաջողված է: Հեղի-
 նակը շատ կարճ, բայց բովանդակալից մի նախադասությամբ կարողանում է
 ընթերցողին հասանելի դարձնել այն պարզ ճշմարտությունը, որ փողի առաջ
 բաց են բոլոր դռները, և բոլոր տեսակի մեղքերը կարելի է ծածկել պարկե-
 տությամբ, եթե իշխանություն ունես: Սա բնորոշ է եղել մի ամբողջ ժամանա-
 կաշրջանի, և Խեչումյանի հերոս Հեթումը սոսկ միջոց է՝ կեղծիքի քողը
 պատռելու համար: Մանավանդ, որ վանահայրը, երբ հետո կրճատում է առանց
 այն էլ քիչ վարձը, Ազարիայի բողոքին ի պատասխան հենց ինքն է խոստո-

վանում, որ նրանց արածը սուրբ գործ է և հանուն այդ սուրբ գործի յուրաքանչյուր ոք տալիս է ինչ ունի, իշխանը տալիս է կալվածքներ, իսկ Ազարիայի, Դեթումի պես մարդիկ՝ իրենց մտավոր կարողությունները: Եկեղեցու կողմից մարդկանց շահագործման օրինակներ հայ գրականության մեջ շատ կան: Վ. Խեչումյանը իր հերոսների ճակատագրով համալրում է այդ շարքը: Ազարիայի համար սա մեծ հարված է, քանզի բացի նրանից, որ իր համար դա ապրելու միջոց էր, այլև նա կորցնում է հավատը դեպի եկեղեցին ու այն ամենը, ինչը սուրբ էր առաջ նրա համար: Եթե նախկինում Ազարիան հավատում էր սրբությանը, ապա հիմա արդեն չկա այդ հավատը: Ազարիան չի կտրող աչք փակել այդ անիրավության դեմ: Նա ընդվզում է և սպանվում: Ազարիան միայնակ չէ: Նա խորհրդանիշ է, այսինքն ով դեմ է դուրս գալիս հզորին, կործանվում է, որովհետև արդեն չկա ոչ մի արդարություն: Արդարությունը իշխանությունն է, ոսկին և մի խումբ մարդկանց կամքը: Որպեսզի ավելի խորը ընդգծի մարդկանց ներաշխարհում կատարվող փոփոխությունները՝ սկիզբ առած սոցիալական հարաբերություններից, հեղինակը պատմվածքում, որպես սյուժետային երկրորդ գիծ, ստեղծում է Մելիքսեթ իշխանորդու և Գուրխիար աղջկա պատմությունը: Երկուսն էլ, թվում է, աննկատ կերպարներ են, մանավանդ որ նրանք առանձին, որպես գործող հերոսներ, պատմվածքում չեն երևում: Նրանց կերպարները ձևավորվում են մյուս հերոսների խոսքի միջոցով: Սակայն այս երկուսի շուրջ հյուսված պատմությամբ Վ. Խեչումյանը պատկերում է այն խոր վիիճ, ուր նետվում են ամենդ ու խեղճ մարդկանց կյանքերը: Դարսանիքի ժամանակ, իշխանորդին փախցնում է գեղեցկուհի Գուրխիարին, իսկ հաջորդ օրը, երբ աղջիկը խելագարվում է, նրան ետ է վերադարձնում: Իշխանորդու կամակոր վարմունքի պատճառով կործանվում է աղջիկը, որի մոտ խելագարությունը այդպես էլ չի անցնում: Նա դառնում է իշխանորդու հերթական գոհեթից մեկը: Դեղինակին ոչինչ չի մնում ամել, քան իր հերոս Դեթումի ձեռքով գրել Ավետարանի վերջին էջում: «Ապա հիշիր եղբորն իմ, խեղճ Ազարիային, որ ողորկեց մագաղաթը Վարդան վանահոր պատվերով և նույն վանահոր պատվերով էլ բանտ նետվեց, արդարության համար տառապեց և սպանվեցավ դաժանորեն: Եվ հիշիր ու աղոթիր խեղճ Գուրխիարին, որ խենթացավ անօրեն Մելիքսեթ իշխանորդու ձեռքից: Եվ դարձյալ ու կրկին հիշիր ու անիծիր իշխանին նենգ, դաժան, ինչպես նեռ: Եվ վանահորն անիծիր» (39):

Սոցիալական հարցադրումները շատ են: Անհայտ են դրանց ակունքները: Վ. Խեչումյանը չի էլ փորձում գտնել սկիզբը: Նա ավելի շատ նկարագրում է այդ հարաբերությունների ընթացքը ու հետևանքը և ուզում է պարզել, թե ինչքանով է հայ մարդը կարողանում պահել ու պահպանել այն, ինչ իրեն է հասել իր նախորդներից, անգամ այն դեպքում, երբ նետվել է հայրենի սահմաններից դուրս և մի կտոր հացը փորձում է վաստակել օտար երկրներում: Վ. Խեչումյանը լավ գիտի, որ պանդխտությունը արհավիրք է հայ ժողովրդի համար, քանզի

այն մասնատում է երկիրը և քանդում պետության հիմքերը: Պանդխտին հասկանալու համար գործը պետք է մեծ հոգեբան լինի, որպեսզի կարողանա թափանցել նրա հոգին և չափի կարոտի եզրերը: Վ. Խեչումյանը իր «Տպագրեալ լմնստերդամ» պատմվածքում տպագրության և գիրք արարելու աստվածային շնորհի թեման շոշափելու կողքին անդրադառնում է պանդխտության թեմային՝ ցավելով, որ այդ սուրբ գործը հայն իրականացնում է օտար հողի վրա: Նա շատ լավ է պատկերում Ամստերդամի հայ գաղութը և հայերի սոցիալական դիրքը այնտեղ: Այստեղ կան հայ վաճառականներ, հարուստներ, միջին խավի ներկայացուցիչներ, մշակներ: Գաղութը նույնիսկ իր եկեղեցին ունի և անգամ փորձում է տպագրատուն բացել: Թվում է՝ մի փոքրիկ Հայաստան է ստեղծված այստեղ, և երջանիկ են մարդիկ: Բայց դա այդպես չէ: Վ. Խեչումյանը խորանում է իր հերոսների հոգեկան աշխարհի մեջ և այնտեղ հայտնաբերում կարոտի, տխրության, թախծի նշույլներ: Հեղինակը սոցիալապես տարբեր աստիճաններում գտնվող հերոսներին չի առանձնացնում իրարից, այլ միավորում է մեկ հայ անվան տակ և ամբողջության մեջ ընգծում նրանցից յուրաքանչյուրի առանձին մտածելակերպը: Օտար երկրում շարունակաբար ապրելով՝ հայը ծուլվում է այդ երկրին: Վ. Խեչումյանի հերոսները մաքառում են այդ ծուլման դեմ՝ փորձելով ամեն ինչով կառչել հայրենի եզերքից և մնալ հայ: Գլխավոր հերոսը Մանվելն է, որը ինչպես մյուսները, ստիպված է եղել թողնել հայրենի տունի, հարազատներին, իր կյանքի մեծ սերը և թափառել երկրե երկիր: Տարիների ընթացքում այդ բոլորը հուշ են դարձել, և Խեչումյանը այնպես է անում, որ ընթերցողը այդ անցյալը տեսնում է հերոսի խոհերի մեջ, նրա կարոտի մեջ: Մանվելը պատրաստ է ցանկացած աշխատանքի, միայն թե փող վաստակի: Նա հոգնել է թափառելուց, և հայրենի եզերքը իր ողջ ուժով ետ է կանչում: Իր հուշերով ապրող հերոսը այդպես էլ չի համակերպվում օտար բարքերի հետ և ետ է վերադառնում՝ իր հետ տանելով տարագրված գրքեր: Իր այս պատմվածքում Վ. Խեչումյանը կոնկրետ սոցիալական բախումներ չի ստեղծում, ինչպես «Հեթում գրիչը» ստեղծագործությունում: Նա կոնկրետ չի էլ նշում, թե ինչ պատճառներից դրված է Մանվելը հեռացել հայրենի տնից: Այդ պատճառները կարծես պարզ են ու հասկանալի:

Վ. Խեչումյանի «Զվարթնոց» ժողովածուն գալիս է հաստատելու, որ հեղինակի համար հայ ժողովուրդը մի մեծ ամբողջություն է՝ իր անցյալով ու ներկայով, իր ապրելակերպով, իր երազանքներով: Ժողովածուի մեջ դրված սոցիալական հարցադրումները ևս մի էջ են բացում ընթերցողի առջև, որպեսզի նա լիովին հասկանա հայի հոգեբանությունը: Հայի ապրելակերպը նկարագրելիս հեղինակը խորը փիլիսոփայական մոտեցում հանդես չի բերում, պարզապես նկարագրում է դեպքերն այնպես, ինչպես տեսնում ու զգում է: Նրա հերոսները աղքատ ու թշվառ են, բայց հարուստ են իրենց գաղափարներով, մտածելակերպով: